ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Պայմանագիր կնքող մարմին՝ Գյոթե Ինստիտուտ e. V.

Ուղեցույց դրամաշնորհի դիմորդների համար

Առաջարկների կանչ - Հայեցակարգերի ներկայացում՝
մշակութային զարգացման ռազմավարության պատրաստմանը աջակցելու համար
-
EU4Culture
ծրագրի շրջանակում

Խթանել մշակույթը և ստեղծարարությունը՝ որպես ԱլԳ երկրներում տնտեսական աճի և սոցիալական զարգացման շարժիչ ուժ

Implementing Partners:

GOETHE INSTITUT
ČESKÁ CENTRA
CZECH CENTRES
INSTITUT FRANÇAIS
DANSK KULTUR-INSTITUT
DANISH CULTURAL INSTITUTE

Նախազգուշացում

Փաստաթուղթը պատրաստվել է Եվրամիության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության համար պատասխանատու են բացառապես Գյոթե ինստիտուտը և կոնսորցիումի մեջ մտնող նրա գործընկերները, հետևաբար այն կարող է չարտացոլել Եվրոպական միության տեսակետը:

Բովանդակություն

Հապավումների աղյուսակ....4
1 Ծանոթություն և ընդհանուր տեղեկություն 5
1.1 EU4Culture 5
1.2 Ո՞վ է իրականացնում EU4Culture ծրագիրը....6
1.3 Նախագծի նպատակները....6
1.4 Պայմանագիր կնքող մարմնի կողմից տրամադրվող ֆինանսական հատկացումը... 7
2 Առաջարկների կանչին մասնակցելու պայմանները 8
2.1 Իրավասության չափանիշները....8
2.1.1 Հայտատուների իրավասությունը 8
2.1.2 Աշխարհագրական և հատուկ չափանիշներ....9
2.1.3 Իրավասու գործողություններ.գործողություններ, որոնց համար կարող է մշակվել հայեցակարգ 10
2.1.4 Ծախսերի իրավասությունը. Թույլատրելի/անթույլատրելի ծախսեր....12
3 Ինչպես դիմել և հետևել գործող ընթացակարգին 14
3.1 Առաջարկների կանչ - Հայեցակարգ - Փուլ 1 14
3.2 Հայեցակարգի առաջարկի բովանդակությունը....14
3.3 Հայտադիմումի մշակում և ուղարկում....15
3.4 Հայեցակարգի առաջարկի ներկայացման վերջնաժամկետը....15
3.5 Հավելյալ տեղեկություն հայեցակարգի առաջարկի մասին 16
3.6 Հայտադիմումի լեզուն....16
4 Հայտադիմումների գնահատում և ընտրություն....17
4.1 Հայտադիմումների հաստատում....20
5 Ժամանակացույց....21
6 Հորիզոնական սկզբունքներ....22
7 Կոնտակտային ինֆորմացիա և տեղեկատվական հանդիպումներ.... . 22
Հավելված - Դիմումի կառուցվածքը 23

Հապավումների աղյուսակ

ՄԶՌ	Մշակութային զարգացման ռազմավարություն
ԱԼԳ	Արևելյան գործընկերություն
ԵՄ	Եվրամիություն
ՄՉՔ	Մայրաքաղաք չհանդիսացող քաղաքներ

1 Ծանոթություն և ընդհանուր տեղեկություն

Դրամաշնորհային ծրագրերի մրցույթը (Աջակցություն մշակութային զարգացման ռազմավարությունների մշակմանը) հայտարարվել է Եվրամիության կողմից ֆինանսավորվող EU4Culture ծրագրի շրջանակում:

1.1 EU4Culture

EU4Culture ծրագիրը նպատակ ունի նպաստել Արևելյան գործընկերության (ԱԼԳ) վեց երկրներում (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա) մշակույթը դարձնել աճի և սոցիալական զարգացման շարժիչ ուժ: Այն աջակցում է մշակութային ոլորտի՝ որպես տնտեսական զարգացման խթանի դերակատարության ամրապնդմանը: Իր միջտարածաշրջանային մոտեցման շնորհիվ նախագիծը կխթանի միջմշակութային երկխոսությունը և գիտելիքների փոխանակումը ԱԼԳ գործընկեր երկրների միջև: EU4Culture-ը կնպաստի մշակույթի ոլորտում տեղական կառավարման բարելավմանը՝ աջակցելով կարգավորման գործընթացներին և մասնակցային քաղաքականության երկխոսությանը:

Ծրագրի կենտրոնում դրված են մշակույթը, ստեղծարար տնտեսությունը և մշակութային հուշարձանները:, որոնք շատ մեծ ներուժ ունեն կայուն մշակութային քաղաքականությունների վրա ազդելու համար: Ծրագիրը կօժանդակի ԱԼԳ տարածաշրջանի քաղաքներին՝ մշակել և իրականացնել Մշակութային զարգացման ռազմավարություն՝ հետևելով մշակույթի եվրոպական մայրաքաղաքների մոտեցմանը:

Ծրագրի շրջանակում ԱԼԳ երկրներից[1] մասնակցության իրավասություն ունեցող մայրաքաղաք չհանդիսացող մեծ և փոքր քաղաքներին (ՄՁՔ) հրավիրում ենք մասնակցելու դրամաշնորհային ծրագրերի մրցույթին[1]: Յուրաքանչյուր ԱԼԳ երկրից կընտրվի 5 ՄՁՔ, որոնք կստանան նախասաղմնային ֆինանսավորում 1000 եվրոյի չափով՝ իրենց հայտադիմումների պատրաստման համար: Յուրաքանչյուր ԱԼԳ երկրում ընտրված 5 ՄՁՔ-ներից առավելագույնը երեքը կստանան 30 000 եվրո ֆինանսավորում, ինչպես նաև աջակցություն՝ տեղական զարգացումը խթանելու ներուժ ունեցող Մշակութային զարգացման ռազմավարություն մշակելու համար:

Որպես երրորդ քայլ՝ 6 երկրներից յուրաքանչյուրում կընտրվի մեկ ՄՁՔ, որը կստանա մինչև 300 000 եվրո ֆինանսավորում՝ իր կողմից մշակված Մշակութային զարգացման ռազմավարությունը իրականացնելու համար: Ընտրված մեծ և փոքր քաղաքները կստանան կարողությունների զարգացման աջակցություն՝ միջազգայնացման, մշակութային ձեռնարկատիրության և կառավարման, մշակութային ինդիկատորների և վիճակագրության ոլորտներում: Նախագիծը կհամալրեն մշակութային նախագծերի, միջինովացիոն նախագծերի, փառատոնների համար նախատեսված դրամաշնորհային, ինչպես նաև շարժունության ծրագրերը:

---

1 Բելառուսը չի մասնակցում այս կանչին:

1.2 Ո՞վ է իրականացնում EU4Culture ծրագիրը

Եվրամիության կողմից ֆինանսավորվող EU4Culture ծրագիրն իրականացնում են ԵՄ անդամ երկրների մշակութային հաստատությունները.

- Գյոթե ինստիտուտ (գլխավոր)
- Չեխական կենտրոններ,
- Դանիայի մշակութային ինստիտուտ,
- Institut français en Géorgie.

Գյոթե ինստիտուտ – Գերմարնիայի Դաշնային Հանրապետության մշակութային ինստիտուտն է, որն ունի համաշխարհային սփռում: Ավելի քան 90 երկրներում իր մասնաճյուղերի միջոցով այն հենվում է քաղաքականապես անկախ առաջատար հաստատությունների և անհատների հետ երկարատև համագործակցության վրա՝ խթանելու և աջակցելու մշակութային և ստեղծարար ճյուղերը:

Չեխական կենտրոններ –Չեխիայի արտաքին գործերի նախարարության օժանդակող կազմակերպություններից է: Այն Չեխիայի Հանրապետության արտաքին քաղաքականության հանրային դիվանագիտության հիմնական գործիքն է և ձգտում է ամբողջ աշխարհում պահպանել Չեխիայի Հանրապետության հեղինակությունը:

Դանիայի մշակութային ինստիտուտ – երկարաժամկետ մշակութային կապեր հաստատելու պատասխանատու մարմինն է: Իր 5 ինստիտուտներով, երկու կենտրոնական երկրներով և մի քանի երկրներում գործունեությամբ այս ինստիտուտը ձգտում է մոտ լինել համաշխարհային զարգացումներին՝ ճիշտ այնտեղ, որտեղ արվեստը, մշակույթը և գիտությունն իսկապես փոփոխություններ են բերում: Ինստիտուտի նպատակն է խրախուսել միջազգային փոխըմբռնմանը՝ մշակութային արժեքների, գաղափարների և փորձի փոխանակման միջոցով:

Institut Français en Géorgie – Վրաստանի ֆրանսիական ինստիտուտն այդ երկրում ներկայացված է 2002թ-ից: Institut Français en Géorgie-ն մի շարք ծրագրեր է իրականացրել մշակույթի, լեզուների ուսուցման, կրթության, բժշկական դասընթացների ոլորտներում, այդ թվում՝ Աբխազիայում: Այն պարբերաբար ընդունում է ՅՈՒՆԻՔ Վրաստանի (Եվրամիության ազգային ինստիտուտներ հանուն մշակույթի» -EUNIC) նախագահությունը և կազմակերպել է Թբիլիսիում Լեզուների եվրոպական օրը:

1.3 Նախագծի նպատակները

Առաջարկների այս կանչի **հիմնական նպատակն** է՝ Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում և Ուկրաինայում բարձրացնել մշակույթի և ստեղծարար արդյունաբերության դերը տնտեսական և սոցիալական զարգացման համար:

Առաջարկների այս կանչի **հատուկ նպատակն** է մշակութային զարգացման ռազմավարության մշակումն ու իրականացումը՝ հիմնված մասնակցային մոտեցման և պետական-մասնավոր երկխոսության վրա՝ միաժամանակ պահպանելով և զարգացնելով բազմամշակութային / բազմազգ մոտեցումները թիրախային քաղաքներում/տարածքներում:

Գործողությունները ներկայացնող ցուցակ.

1) Բարելավել տեղական կառավարումը՝ մշակույթի և ստեղծագործական ոլորտի կայուն զարգացման համար:
2) Ուժեղացնել տեղական իշխանությունների ռեսուրսներն ու կարողությունները

   մշակութային քաղաքականության ոլորտում և ստեղծարար տնտեսությունների զարգացման մեջ:
3) Կատարելագործել կառավարման կառույցները՝ մշակույթի և ստեղծարար ոլորտի կայուն զարգացման համար:
4) Ուսումնասիրել և վերլուծել մշակույթի և ստեղծարար ոլորտի հիմնական խնդիրները,
5) Ամրապնդել տեղական իշխանությունների և մշակույթի ու ստեղծարար ոլորտի շահառուների համագործակցությունը՝ տեղական մշակութային բիզնեսների, ներկայացուցչական ասոցիացիաների և քաղհասարակական կազմակերպությունների հնարավորությունները ուսումնասիրելու և ներդնելու միջոցով, ինչն ուղղված կլինի մասնակցելու հանրային իշխանությունների հետ քաղաքականության խոսույթին և կառուցողական երկխոսությանը:
6) Ուժեղացնել մշակույթի և ստեղծարար տնտեսության ներկայացուցիչների կարողությունները՝ որակյալ և կայուն ծառայություններ մատուցելու համար:
7) ԱԼԳ երկրներում բարելավել մշակույթի և ստեղծարար տնտեսությունների ոլորտներում միջմշակութային երկխոսությունն ու տեղեկացվածությունը:
8) Համալրել միջազգայնացման հնարավորություններին վերաբերող գիտելիքները ազգային/տարածաշրջանային/ տեղական մշակույթի գործիչների մոտ:

1.4 Պայմանագիր կնքող մարմնի կողմից տրամադրվող ֆինանսական հատկացումը

EU4Culture-ի երեք փուլերի համար նախատեսված ընդհանուր բյուջեն կազմում է **1,975,00 եվրո:** Պատվիրատուն իրավունք է վերապահում իրեն՝ չտրամադրել բոլոր առկա միջոցները:

Երեք փուլերի արդյունքում տրվող գումարը հետևյալն է.

1) Փուլ 1 – 25,000 եվրո: ԱԼԳ 6 երկրներից յուրաքանչյուրում ամենաշատը 5 ՄՁՔ ստանում է 1,000 եվրո,
2) Փուլ 2 – 450,000 եվրո: ԱԼԳ 6 երկրներից յուրաքանչյուրում 3 ՄՁՔ ստանում է 30,000 եվրո,
3) Փուլ 3 – 1,500,000 եվրո: ԱԼԳ 6 երկրներից յուրաքանչյուրում 1 ՄՁՔ ստանում է 300,000 եվրո:

Ուշադրություն. 1000 եվրո դրամաշնորհ ստացած հայտատուները պարտավոր են պատրաստել և ուղարկել ամբողջական հայտ:

Վերջնաժամկետների և պայմանների մասին մանրամասների համար տե՛ս Ուղեցույցի Բաժին 3-ը:

2 Առաջարկների կանչին մասնակցելու պայմանները

2.1 Իրավասության չափանիշները

Կան իրավասության չափանիշների չորս փաթեթներ, որոնց պետք է համապատասխան լինել՝ հայեցակարգի առաջարկի ներկայացման օրը: Դրանք են.

(1) Հայտատուները.
- Գլխավոր հայտատուն, այսինքն՝ հայտի ձևը ներկայացնող կազմակերպությունը (2.1.1),
- Համահայտատու(ներ)ը (եթե այլ բան նշված չէ, ապա գլխավոր հայտատուն և համահայտատու (ներ) ը այսուհետ միասին կոչվում են «հայտատու (ներ)» (2.1.1),

(2) գտնվելու վայրը.
- Աշխարհագրական իրավասության չափանիշներ (2.1.2),
- Մասնակցության իրավունքի հատուկ չափանիշներ (2.1.2);

(3) գործողությունները.
- գործողություններ, որոնց համար կարող է շնորհվել դրամաշնորհ (2.1.3);

4) ծախսերը.
- Ծախսերի տեսակները, որոնք կարող են հաշվի առնվել դրամաշնորհի չափը սահմանելիս (2.1.4):

2.1.1 Հայտատուների իրավասությունը

Գլխավոր հայտատու

Արևելյան գործընկերության տարածաշրջանի հինգ երկրների, այսինքն՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի մայրաքաղաք չհանդիսացող քաղաքները կարող են մասնակցել բաց Կանչին և հանդես գալ որպես գլխավոր հայտատու: Գլխավոր հայտատուն հայտը ներկայացնող կազմակերպությունն է:

Դրամաշնորհին դիմելու իրավունք ունենալու համար գլխավոր հայտատուն պետք է.

- լինի իրավաբանական անձ **և**
- լինի շահույթ չհետապնդող **և**
- ինի տարածաշրջանային / տեղական պետական մարմին, ներկայացնի մշակույթի և/կամ ստեղծարար ոլորտը տվյալ քաղաքում **կամ**
- ոչ առևտրային կազմակերպություն, որը գործում է համապատասխան պետական մարմնի անունից, և որը ներկայացնում է մշակույթի կամ ստեղծարար ոլորտը տվյալ քաղաքում **և**
- անմիջականորեն պատասխանատու լինի հայտատու(ներ)ի և կից կազմակերպությունների գործողությունների նախապատրաստման և կառավարման համար՝ չգործելով որպես միջնորդ:

Գլխավոր հայտատուն կարող է գործել անհատապես կամ համահայտատուների (դիմորդների) հետ, ինչը քաջալերվում է:

Գլխավոր հայտատուի օրինական ներկայացուցիչը (քաղաքապետը)պետք է պաշտոնապես թույլ տա հայեցակարգի դիմումի ներկայացումը՝ ստորագրելով **Ինքնահայտարարագրի ձևաթուղթը**:

Դրամաշնորհը ստանալու և պայմանագիր կնքելու մասին որոշում կայացնելու դեպքում գլխավոր հայտատուն գրավոր կտեղեկացվի հաջող արդյունքի մասին և կդառնա Համակարգող: Համակարգողը Պայմանագիր կնքող մարմնի հիմնական խոսակիցն է: Համակարգողը ներկայացնում և գործում է ցանկացած այլ շահառուի անունից (եթե այդպիսիք կան) և համակարգում է գործողությունների ձևավորումը, մշակումը և իրականացումը:

Համահայտատու(ներ)

Համահայտատուները մասնակցում են գործողության նախագծմանը և իրականացմանը, և նրանց կրած ծախսերը իրավասու են ճիշտ այնպես, ինչպես գլխավոր հայտաատուինը:

Համահայտատուները պետք է բավարարեն նույն չափանիշներին, ինչ գլխավոր հայտատուն: Բացի այդ, համահայտատու տարածաշրջանային / տեղական մարմինները պետք է լինեն նույն քաղաքից, ինչը պարտավորություն չէ այլ շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար:

Դրամաշնորհ ստանալու որոշման դեպքում համահայտատու(ներ)ը (եթե այդպիսիք կան) կդառնան շահառու(ներ)՝ գլխավոր հայտատուի հետ միասին:

2.1.2 Աշխարհագրական և հատուկ չափանիշներ

Ցանկանում ենք ընդգծել, որ սույն կանչի շրջանակներում մայրաքաղաք չհանդիսացող մեծ ու փոքր քաղաքների կողմից իրականացվելիք գործողությունները պետք է ունենան արդյունավետ բազմամշակութային / բազմէթնիկ ներգրավվածություն, և պետք է նպատակ ունենան պահպանել և զարգացնել բազմամշակութային / բազմազգ չափորոշիչները:

Աշխարհագրական չափանիշ

Դրամաշնորհ ստանալու համար հայտատուները պետք է նաև համապատասխանեն իրավասության հետևյալ բոլոր չափանիշներին.

(1) Լինել ոչ մայրաքաղաքային մեծ ու փոքր քաղաքներ, որոնք տեղակայված են Արևելյան գործընկերության հինգ երկրներում (այսինքն ՝ Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում, Ուկրաինայում) **և**

(2) Լինել ոչ մայրաքաղաքային մեծ ու փոքր քաղաքներ, որոնք լիովին վերահսկվում են պաշտոնական կառավարությունների կողմից, ինչպես նաև ճանաչված են միջազգային օրենսդրությամբ **և**

(3) Ունենալ անկաշկանդ մատչելիություն, ինչպես նաև կայուն անվտանգություն՝ բոլոր թիրախային խմբերի համար:

Նախապատվությունը կտրվի իրավասու ոչ մայրաքաղաքային մեծ ու փոքր քաղաքներին, որոնք մշակույթի ոլորտում ԵՄ ֆինանսավորման պատմություն չունեն:

Համապատասխանության հատուկ չափանիշներ

Մասնակցության իրավունքի հատուկ չափանիշները սահմանվել են՝ ելնելով իրավասու երկրների մեծությունից, բնակչության քանակից, ինչպես նաև քաղաքների վարչական բաժանումից:

Դրամաշնորհ ստանալու իրավունք ստանալու համար հայտատուները պետք է համապատասխանեն իրավասության հետևյալ չափանիշներին.

Երկիր	Համապատասխանության հատուկ չափորոշիչների նկարագրություն
Հայաստան Բնակչությունը՝ 2,97 միլիոն մարդ	***15 000*** կամ ավելի բնակչություն ունեցող մայրաքաղաք չհանդիսացող մեծ և փոքր քաղաքներ
Ադրբեջան Բնակչությունը՝ 10,13 միլիոն մարդ	***45 000*** կամ ավելի բնակչություն ունեցող մայրաքաղաք չհանդիսացող մեծ և փոքր քաղաքներ
Վրաստան Բնակչությունը՝ 3,72 միլիոն մարդ	***15 000*** կամ ավելի բնակչություն ունեցող մայրաքաղաք չհանդիսացող մեծ և փոքր քաղաքներ
Մոլդովայի Հանրապետություն Բնակչությունը՝ 3,31 միլիոն մարդ	***15 000*** կամ ավելի բնակչություն ունեցող մայրաքաղաք չհանդիսացող մեծ և փոքր քաղաքներ
Ուկրաինա Բնակչությունը՝ 41,53 միլիոն մարդ	***180 000*** կամ ավելի բնակչություն ունեցող մայրաքաղաք չհանդիսացող մեծ և փոքր քաղաքները

2.1.3 Իրավասու գործողություններ. գործողություններ, որոնց համար կարող է մշակվել հայեցակարգ

Սահմանում

Գործողությունը ակտիվությունների շարքն է:

Տևողությունը

Հայեցակարգի առաջարկի պատրաստման / ներկայացնելու նախատեսված ժամանակահատվածը մեկ (1) ամիս է:

Ամբողջական հայտի պատրաստման / ներկայացնելու համար նախատեսված ժամանակահատվածը երկու (2) ամիս է:

Մշակութային զարգացման ռազմավարության պատրաստման համար նախատեսված ժամանակահատվածը վեց (6) ամիս է:

Մշակութային զարգացման ռազմավարության իրականացման համար նախատեսված Ժամանակահատվածը քսանհինգ (25) ամիս է:

Ոլորտներ կամ թեմաներ

Հատուկ ոլորտները/ թեմաները, որոնց պետք է առնչվեն գործողությունները, նկարագրված են 1.3 կետում: **Գործողությունները պետք է ուղղված լինեն 1.3 կետում թվարկված նպատակային գործողություններից առնվազն երեքի իրականացմանը:** Դիմորդները պետք է հստակ նշեն, թե այդ ութից որոնք են ընդգրկված իրենց առաջարկի մեջ:

Վայրը

Գործողությունները պետք է տեղի ունենան հետևյալ երկրների մայրաքաղաք չհանդիսացող քաղաքներում ՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա: Այնուամենայնիվ, այնպիսի գործողություններ, ինչպիսիք են օրինակ սեմինարներն ու համաժողովները, ճանաչողական այցերը, քարոզարշավի / համաժողովի բացում կամ փակումները, կարող են տեղի ունենալ այլ երկրներում այն դեպքում, եթե պատշաճ կերպով հիմնավորված են դրանց պատճառները, քաղաքական գործողության գործառնական նկատառումները: Նման դեպքերը կքննվեն գնահատման գործընթացում:

Ծրագրի փուլերը

• **Հայեցակարգի առաջարկի փուլ** - ԱԼԳ 5 երկրներից յուրաքանչյուրի <u>իրավասու քաղաքները</u> հրավիրվում են ներկայացնել հայեցակարգային առաջարկ, որը.

o նկարագրում է մշակութային և ստեղծարար միջավայրը,

o Սահմանում է համապատասխան քաղաքում մշակույթի զարգացման ռազմավարության տեսլականը,

• **Ամբողջական դիմումի փուլ** - 5 մասնակից ԱԼԳ երկրներից յուրաքանչյուրից **5 (հինգ) հայտատու** քաղաք կհրավիրվեն պատրաստելու <u>ամբողջական հայտ</u>, որի համար նրանցից յուրաքանչյուրը կստանա 1000 եվրո:

o Մշակութային և ստեղծարար միջավայրի ավելի մանրամասն նկարագրություն,

o Քաղաքի Մշակույթի զարգացման ռազմավարության տեսլականի ավելի մանրամասն ներկայացում,

o Ամբողջական Բյուջեի ներկայացում:

• **Մշակութային զարգացման ռազմավարության փուլ** – Մասնակից ԱԼԳ 5 երկրներից յուրաքանչյուրից ամբողջական հայտ ներկայացրած առավելագույնը **երեք (3) հայտատու քաղաք** կհրավիրվեն ներկայացնելու իրենց մշակութային զարգացման ռազմավարությունը, որի համար յուրաքանչյուրը կստանա 30,000 եվրո:

• **Իրականացման փուլ** - 5 մասնակից ԱԼԳ երկրներից յուրաքանչյուրից կընտրվի **1 (մեկ) քաղաք՝** իր ներկայացրած մշակութային և զարգացման ռազմավարությունն իրականացնելու համար, ինչի համար կպարգևատրվի 300,000 եվրոյի դրամաշնորհով:

Տեսանելիություն

EU4Culture ծրագրի շրջանակում դրամաշնորհ ստացող շահառուները պարտավոր են ապահովել պատշաճ տեսանելիություն, որպեսզի հանրությունը տեղեկացվի ֆինանսավորման աղբյուրի մասին (տվյալ դեպքում՝ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող նախագիծ): Տեղեկատվության և հաղորդակցության արշավը կազմակերպելիս շահառուները պետք է ցույց տան, որ աջակցությունն իրականացվում է ԵՄ ֆինանսավորմամբ՝ EU4Culture ծրագրի շրջանակում:

Անհրաժեշտ է հարգել նաև տեսանելիության և հաղորդակցության մյուս սկզբունքները՝ համաձայն EU4Culture-ի Հաղորդակցության ռազմավարության՝

https://ec.europa.eu/europeaid/communication-and-visibility-manual-eu-external-actions_en

2.1.4 Ծախսերի իրավասությունը. Ընդգրկվող ծախսեր

EU4Culture ծրագրի շրջանակում կֆինանսավորվեն միայն թույլատրելի ծախսերը:
Թույլատրելի և ոչ թույլատրելի ծախսերերը նկարագրված են ստորև:

Թույլատրելի ծախսերը դրամաշնորհի շահառուի կողմից կատարվող ծախսերն են, որոնք համապատասխանում են հետևյալ չափանիշներին.

- Դրանք բխում են դրամաշնորհի նպատակներից և անհրաժեշտ են ծրագրի իրականացման համար,
- Դրանք իրականանում են գործողությունների իրականացման ժամանակահատվածում,
- Դրանք համապատասխանում են գործող հարկային և օրենսդրական պահանջներին,
- Դրանք ողջամիտ են, տեղին, արդարացված, և համապատասխանում են առողջ ֆինանսական կառավարման պահանջներին, մասնավորապես՝ տնտեսման և արդյունավետության առումով,
- <u>Փուլ 2-ի համար – Դրանք նշված են բյուջեում:</u>

<u>Թույլատրելի ուղիղ ծախսեր (սա լրացվում է ամբողջական հայտը լրացնելիս)</u>
Գործողության համար թույլատրելի ուղիղ ծախսերը այն ծախսերն են, որոնք, հաշվի առնելով վերը նշված թույլատրելիության պայմանները, ճանաչելի են որպես հատուկ ծախսեր, որ ուղղակիորեն կապված են գործողության կատարողականի հետ: Այսպիսիք են.

- Անձնակազմի ծախսերը, որն աշխատում է հայտատուի հետ աշխատանքային պայմանագրով կամ գործողության իրականացման համար համարժեք նշանակման ակտով: Այդպիսի ծախսերի մեջ ներառվում են փաստացի աշխատավարձերը, ինչպես նաև սոցիալական ապահովագրության վճարները և նրանց վարձատրության մեջ ներառված այլ կանոնադրական ծախսեր,
- Սպառողական ապրանքների (գրասենյակային, գրենական պիտույքներ) և պարագաների ծախսերը, որոնք հնարավոր է նույնականացնել, և որոնք բխում են գործողություններից,
- Գործողության կատարման պահանջներից ուղղակիորեն բխող ծախսերը (տեղեկատվության տարածում, տվյալ գործողությանը հատուկ գնահատում, թարգմանություն, տպագրություն, սրբագրում, պատճենահանում, և այլն), այդ թվում՝ ֆինանսական ծառայությունների ծախսերը (մասնավորապես, դրամական փոխանցումների ծախսերը),

- Ծառայությունների, մատակարարումների կամ այլ աշխատանքային պատվերների ծախսերը, որոնք բխում են շահառուի ծրագրային նպատակներից: Այդ ծախսերի մեջ ներառված են որակի վերահսկման և նախագծի պլանավորման միջոցների ծախսերը, ինչպես ծրագրի սկզբում, այնպես էլ դրա ընթացքում:
- Այլ ծախսեր, որ կբխեն կատարողականից:

Անթույլատրելի ծախսեր

Անթույլատրելի են համարվում հետևյալ ծախսերը.

- Պարտքեր և պարտքերի սպասարկման վճարներ (տոկոսներ),
- Նախազգուշական խնայողություններ կորուստների, պարտքերի կամ հետագայում հավանական պարտավորությունների համար,
- Հողատարածքի կամ շինության ձեռքբերում,
- Տրանսպորտային միջոցների ձեռքբերում:

Կարևոր. Ցանկացած պարագայում պետք է խուսափել շահերի բախումից
Վարչական, ֆինանսական և գործառնական կարողությունները:
Իրավասու լինելու համար գլխավոր հայտատուն պետք է ապահովի աշխատող վարչական կառուցվածքների առկայությունը (այսինքն ՝ հաշվապահություն, գնումներ, վերահսկիչ մարմիններ և այլն): Վարչական, ֆինանսական և գործառնական կարողությունների գնահատումը կդառնա 2-րդ փուլի (ամբողջական հայտի փուլ) մաս, և այս փուլում մանրամասն տեղեկատվություն կպահանջվի:
Այս փուլում դիմորդներից կպահանջվի նաև ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

• Վերջին երկու (աուդիտի ենթարկված) **ֆինանսական հաշվետվությունները,**

• Տեղական կանոնակարգերի համաձայն **գրանցման / իրավական կարգավիճակի ապացույց:**

Փուլ 1-ում (հայեցակարգի ներկայացման փուլ) պետք է ներկայացվի նաև **ինքնահավաստագիր**՝ մանրամասն ներկայացնելով ԵՄ բացառման չափանիշները, ինչպես նաև մանրամասնվի շահերի բախումից և կրկնակի ֆինանսավորումից խուսափելը (տե՛ս ԵՄ ֆինանսական կանոնակարգում, Հոդված 136. Բացառման չափանիշները և բացառումների մասին որոշումները):

Կրկնակի ֆինանսավորման բացառում

Հայտատուները պետք է երաշխավորեն, որ նախկինում նախագծի գործողությունները մասամբ կամ ամբողջովին ֆինանսավորում չեն ստացել, կամ հետագայում չեն ստանալու Եվրամիության այլ ֆոնդերից:

3 Ինչպես դիմել և հետևել գործող ընթացակարգին

3.1 Առաջարկների կանչ – Հայեցակարգ – Փուլ 1

Այս փուլում մայրաքաղաք չհանդիսացող քաղաքներին (ՄՁՔ) Հայաստանից, Ադրբեջանից, Վրաստանից, Մոլդովայի Հանրապետությունից և Ուկրաինայից առաջարկվում է

ներկայացնել իրենց հայեցակարգը: Հայեցակարգում գլխավոր հայտատուն պետք է նկարագրի իր քաղաքի մշակութային և ստեղծարար միջավայրը և ներկայացնի մակութային քաղաքականության ընդհանուր տեսլական միջոցառումներ՝ կապված մշակութային և ստեղծարար ոլորտի զարգացման հետ:

Հաջող հայտադիմումի հիմքում ընկած է նախագծի գաղափարը, որը հստակ մատնանշում է տվյալ քաղաքում առկա մշակույթի և ստեղծարար ճյուղերի մարտահրավերները և դրանց դիմակայելու ընդհանուր անհրաժեշտությունը: Գլխավոր հայտատուն պետք է հրավիրի/ներգրավի մշակութային և ստեղծարար ճյուղերի ներկայացուցիչներին՝ հայտերի մշակման, իսկ ավելի ուշ՝ ՄԶՌ-ը իրականացնելու գործընթացներին:

Գլխավոր հայտատուն պետք է հստակ սահմանի նպատակները, ձեռք բերվելիք արդյունքները, իրականացվելիք գործողությունները և թիրախային խմբերը: Գլխավոր հայտատուն նաև կարող է իրականացնել հետազոտություն՝ համատեքստի և հնարավոր ազդեցության, ինչպես նաև կարիքների վերլուծություն՝ մասին հավելյալ տեղեկություն ունենալու նպատակով:



3.2 Հայեցակարգի առաջարկի բովանդակությունը

Հայեցակարգի ներկայացման համար հայտատուն պետք է.

• Նկարագրի մշակույթի և ստեղծարար ոլորտի ներդրումը քաղաքի սոցիալ-տնտեսական միջավայրում,

• Ներկայացնի վերջին հինգ տարիների ընթացքում քաղաքի մշակույթային կամ ստեղծարար ոլորտում կազմակերպված խոշոր տոնավաճառների, փառատոների, համագումարների և այլ լայնամասշտաբ միջոցառումների օրինակներ,

• տեղեկություն տրամադրի քաղաքի բազմամշակութային / բազմազգ մոտեցումների մասին,

• Տեղեկատվություն տրամադրի հիմնական ենթակառուցվածքների, օբյեկտների կամ այլ հարթակների և տարածքների մասին, որոնք գործում և խթանում են մշակույթը և ստեղծարարությունը,

• Նկարագրի քաղաքացիական հասարակության հասարակական կազմակերպությունները, որոնք ակտիվ են տեղական մշակութային և ստեղծարար դաշում,

* Բացատրի, թե ինչպես են տվյալ քաղաքում մշակույթի և ստեղծագործական ոլորտի ներկայացուցիչներին աջակցում պետական մարմինները,

• Տեղեկատվություն տրամադրի տվյալ քաղաքում մշակույթը և ստեղծարար գործունեությունը խթանելուն ուղղված կարողությունների զարգացման ծրագրերի կամ այլ կրթական ծրագրերի վերաբերյալ,

• Տրամադրի քաղաքի մշակույթի և ստեղծարար ոլորտի զարգացման տեսլականի ընդհանուր նկարագիրը,

• Որոշակիացնի և ներկայացնի քաղաքի Մշակութային զարգացման ռազմավարության իրականացմանն ուղղված հիմնական միջոցառումները, հիմնական թիրախային խմբերը և ակնկալվող արդյունքները:

3.3 Հայտադիմումի մշակում և ուղարկում

Առաջարկների ներկայացման փուլին մասնակցելու համար գլխավոր հայտատուն պետք է՝

1. Տեղեկատվություն տրամադրի հայտատու քաղաքի և նրա իրավաբանական ներկայացուցչի (օրինակ՝ քաղաքապետարանի) մասին: Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ այս տվյալների գրանցումը **պարտադիր պետք է կատարվի GAP - Goethe Application Portal- ում**:
2. Տրամադրի համապատասխան տեղեկատվություն՝ համաձայն հայտադիմումի ձևաթղթում տրված ցուցումների կամ ուղղորդող հարցերի:

Հայտատուներն իրենց հայտադիմումները և Ինքնահայտարարագիրը պետք է ուղարկեն առցանց՝ GAP Portal -ի միջոցով

https://gap-online.goethe.de/en-US/cases/378d631f-2ebf-463f-8ff8-e2f2f937a4d9/create

Հայեցակարգի և ինքնահայտարարագրի մուտքագրումից հետո գլխավոր հայտատուն կստանա ավտոմատ հաստատում ՝ իր GAP հաշվի մեջ:

Ձևաթղթերը և հարակից փաստաթղթերը նախագծի կայքում հասանելի կլինեն դրամաշնորհային մրցույթի հայտարարումից հետո (2021թ. մայիսի 21):

Տեխնիկական խնդիրների դեպքում խնդրում ենք կապնվել հետևյալ հասցեով՝

support.gap@goethe.de

3.4 Հայեցակարգի առաջարկի ներկայացման վերջնաժամկետը

Մրցույթի վերջնաժամկետն է **2021թ. հունիսի 31-ը՝ մինչև կեսգիշեր (23:59, Կենտրոնական եվրոպական ժամանակ):**

Վերջնաժամկետը տեղական ժամանակի վերափոխելու համար կարող եք օգտագործել ցանկացած առցանց ժամանակի փոխարկիչ գործիք, որն ընդունում է հաշվի ժամային գոտիները և ձմեռային / ամառային ժամանակի փոփոխությունները (օրինակն առկա է այստեղ)[2]:

---

[2] Օրինակ՝ http://www.timeanddate.com/worldclock/converter.html.

Գլխավոր հայտադիմորդին խորհուրդ ենք տալիս չսպասել մինչև վերջին օրը՝ իր հայեցակարգը ներկայացնելու համար, քանի որ համացանցի ծանրաբեռնվածությունը կամ կապի անսարքությունը (ներառյալ էլեկտրաէներգիայի խափանումը և այլն) կարող են դժվարությունների պատճառ դառնալ:

Պայմանագիր կապող մարմինը պատասխանատվություն չի կրում վերոնշյալ դժվարությունների համար:

Ցանկացած հայեցակարգային առաջարկ որը կներկայացվի վերջնաժամկետից հետո, կմերժվի:

3.5 Հավելյալ տեղեկություն հայեցակարգի առաջարկի մասին

Հայտադիմումների պատրաստման շրջանակներում EU4Culture- ի թիմը կկազմակերպի առցանց տեղեկատվական հանդիպումներ և սեմինարներ՝ անհասկանալի հարցերը պարզելու համար: Հանդիպումները տեղի կունենան բաց կանչի մեկնարկից երկու շաբաթ անց (այսինքն՝ 2021 թվականի հունիսի առաջին շաբաթվա ընթացքում): Առցանց տեղեկատվական սեմինարները կանցկացվեն տեղական լեզուներով: Նիստերը կձայնագրվեն և հասանելի կլինեն ծրագրի կայքում:

Հայտատուների նկատմամբ հավասար վերաբերմունք ապահովելու համար պայմանագիր կնքող մարմինը չի կարող նախնական եզրակացություն տալ գլխավոր հայտատուի, համահայտատուների, փոխկապակցված կազմակերպությունների, գործողության կամ որոշակի ակտիվությունների իրավասության վերաբերյալ:

No individual replies will be given to questions. All questions and answers as well as other important notices to applicants during the course of the evaluation procedure will be published on GAP Portal https://gap-online.goethe.de/en-US/cases/378d631f-2ebf-463f-8ff8-e2f2f937a4d9/create.

Հարցերին անհատական պատասխաններ չեն տրվի: Գնահատման ընթացքում դիմորդների բոլոր հարց ու պատասխանները, ինչպես նաև հայտադիմորդներին ուղղված կարևոր ծանուցումներ կհրապարակվեն **GAP պորտալում՝**

https://gap-online.goethe.de/en-US/cases/378d631f-2ebf-463f-8ff8-e2f2f937a4d9/create.

3.6 Հայտադիմումի լեզուն

EU4Culture-ի պաշտոնական լեզուն անգլերենն է: Այնուամենայնիվ, հայտադիմումների առաջին մրցույթում (Փուլ 1, տե՛ս Աղյուսակ 3) թույլատրվում է հայտադիմումները ուղարկել ԱԼԳ երկրների ազգային լեզուներով:

Վերը նշվածից բացի այլ լեզուներով ուղարկված հայտադիմումները չեն դիտարկվի:

4 Հայտադիմումների գնահատում

Ուղարկված բոլոր հայտադիմումներն անցնելու են հետևյալ փուլերից բաղկացած գնահատման ստանդարտ ընթացակարգով.

(1) Ֆորմալ և մասնակցության համապատասխանության գնահատում – ստուգվելու է, թե արդյոք հայտատուն համապատասխանում է հայտադիմում ուղարկելու ֆորմալ չափորոշիչներին,
(2) Որակական գնահատում – գնահատվելու է հայտադիմումի բովանդակությունը:

Յուրաքանչյուր հայտադիմում ենթարկվելու է ֆորմալ և մասնակցության համապատասխանության գնահատման: Խորհուրդ է տրվում նախքան հայտադիմումը լրացնելը ծանոթանալ ընդհանուր և հատուկ չափանիշներին:

Ֆորմալ և մասնակցության համապատասխանության գնահատումը կիրականացվի համաձայն հետևյալ չափորոշիչների.

#	Ֆորմալ և մասնակցության իրավասության չափորոշիչներ
1	Առցանց հայտադիմումն ուղարկվել է ժամանակին (նախքան վերջնաժամկետի ավարտը, տե՛ս Գլուխ 3.4)
2	Հայտադիմումն ուղարկվել է անգլերենով կամ ԱԼԳ երկրների ազգային լեզուներից մեկով
3	Հայտադիմումի համար օգտագործվել է ճիշտ ձևաթուղթ, և այն ամբողջությամբ լրացված է
4	Առկա է մասնակցության ընդհանուր և հատուկ չափանիշների համապատասխանություն (տե՛ս Գլուխ 2.1.1)
5	Առկա է հայտատուի աշխարհագրական և հատուկ կարգավիճակների համապատասխանություն (տե՛ս Գլուխ 2.1.2)
6	Ծրագրի գործողությունները չեն ունեցել և չեն ունենալու Եվրամիության ֆոնդերից այլ ֆինանսավորում
7	**Ուղարկվել է Ինքնահայտարարագիրը, և այն ճիշտ է (ստորագրված է հայտատուի օրինական ներկայացուցչի կողմից**)

Այն հայտերը, որոնք չեն համապատասխանի ֆորմալ և մասնակցության համապատասխանության չափորոշիչներին, (Գլուխ 2.1) կմերժվեն:

Ֆորմալ և մասնակցության համապատասխանության ստուգումը հաջողությամբ անցած հայտադիմումները կուղարկվեն որակական գնահատման: Որակական գնահատումը կիրականացնի անկախ ժյուրին, որը բաղկացած կլինի անկախ փորձագետներից:

Կկիրառվեն ընտրության հետևյալ չափորոշիչները՝

Չափորոշիչ	Կողմնորոշիչ հարցեր
1. Հայտադիմումի համապատասխանություն	- Արդյո՞ք հայտադիմումը համապատասխանում է հայտարարված մրցույթի թեմատիկ շրջանակին, ինչպես որ նկարագրված է դրամաշնորհային մրցույթի հայտարարության մեջ: - Արդյո՞ք առաջարկվող հայտը բավարար չափով ավելացված արժեք է ներկայացնում՝ տվյալ քաղաքում արդեն իրականացված կամ ընթացիկ նախագծերի տեսանկյունից:
2. Մշակութային և ստեղծարար ճյուղերի դերն ու զարգացումները	- Ինչպե՞ս է նկարագրված մշակութային և ստեղծարար ճյուղերի դերը և ներդրումը հայտատու քաղաքում առկա սոցիալ-տնտեսական միջավայրում: - Արդյո՞ք հայտադիմումը նախանշում է այն հիմնական ենթակառուցվածքները, օբյեկտները կամ այլ հարթակներն ու տարածքները, որոնք ուղղված են տվյալ քաղաքում մշակութային և ստեղծարար ճյուղերի վարմանը և խթանմանը:
3. Համագործակցություն մշակութային և ստեղծարար ճյուղերում	- Որքանո՞վ է հայտատուն գնահատում ՀԿ/ՔՀԿ-ների դերը մշակույթի և ստեղծարար ոլորտներում:

հանրային և մասնավոր շահագրգիռ կողմերի հետ	- Ինչպե՞ս են քաղաքի հանրային իշխանություններն աջակցում մշակութային և ստեղծարար ոլորտների ներկայացուցիչներին: - Որո՞նք են կարողությունների զարգացման ընթացիկ ծրագրերը կամ այլ կրթական հարթակներ, որոնք նպատակ ունեն խթանել մշակույթը և ստեղծարարությունը հայտատու քաղաքում: - Ինչքանո՞վ են մշակութային և ստեղծարար ոլորտների հանրային և մասնավոր ներկայացուցիչները ներգրավված հայտատու քաղաքում մշակույթի քաղաքականության մշակման գործընթացում:
4. Կարիքների վերլուծություն	- Արդյո՞ք հայտադիմումը տրամադրում է բավարար տեղեկություն՝ տվյալ քաղաքում մշակութային և ստեղծարար ոլորտներում առկա մարտահրավերների և կարիքների վերաբերյալ: - Արդյո՞ք հայտադիմումը տրամադրում է բավարար տեղեկություն առաջարկվող միջամտությունների կամ հնարավոր օպտիմալացման միջոցառումների վերաբերյալ, որոնք կարող են նպաստել հայտատու քաղաքում մշակութային և ստեղծարար էկոհամակարգի բարելավմանը:
5. Մշակույթի և ստեղծարարության զարգացման տեսլական	- Ինչպե՞ս է նկարագրվում հայտատու քաղաքում մշակութային և ստեղծարար ոլորտների համընդհանուր տեսլականը: - Ինչպե՞ս է հայտադիմումը սահմանում հիմնական մշակութային քաղաքականության (քաղաքականությունների) միջոցառումները, հիմնական թիրախային խմբերը և ակնկալվող արդյունքները, որոնք կարող են համահունչ լինել հայտատու քաղաքում Մշակութային զարգացման ռազմավարությանը:
6.	- Արդյոք ներկայացվող հայեցակարգի առաջարկը անդրադառնում է ինդիկատիվ գործողություններից առնվազն երեքին:

Առավելությունը կտրվի այն քաղաքներին, որոնք մշակույթի ոլորտի համար ԵՄ ֆինանսավորում երբեք չեն ստացել:

Յուրաքանչյուր չափորոշիչ կգնահատվի 4 բալանոց սանդղակով՝

Միավորներ	Գնահատում
5 միավոր	Առաջարկվող հայեցակարգը լիարժեք համոզիչ է: Հայեցակարգն ունի շատ բարձր համապատասխանություն հայտադիմումի ձևաթղթում պահանջվող կոնկրետ թեմաներին/ճյուղերին/ ոլորտներին և պահանջներին:

4 միավոր	Առաջարկվող հայեցակարգը լիարժեք համոզիչ է: Հայեցակարգն ունի բարձր համապատասխանություն հայտադիմումի ձևաթղթում պահանջվող կոնկրետ թեմաներին/ճյուղերին/ ոլորտներին և պահանջներին:
3 միավոր	Չնայած մանր բացթողումներին՝ առաջարկվող հայեցակարգը համոզիչ է: Հայեցակարգն ունի միջին համապատասխանություն հայտադիմումի ձևաթղթում պահանջվող կոնկրետ թեմաներին/ճյուղերին/ ոլորտներին և պահանջներին:
2 միավոր	Առաջարկվող հայեցակարգը համոզիչ է միայն որոշ չափով: Հայեցակարգն ունի միջինից ցածր համապատասխանություն հայտադիմումի ձևաթղթում պահանջվող կոնկրետ թեմաներին/ճյուղերին/ ոլորտներին և պահանջներին:
1 միավոր	Առաջարկվող հայեցակարգը համոզիչ է միայն շատ սահմանափակ չափով: Հայեցակարգն ունի միջինից բավականին ցածր համապատասխանություն հայտադիմումի ձևաթղթում պահանջվող կոնկրետ թեմաներին/ճյուղերին/ ոլորտներին և պահանջներին:
0 միավոր	Առաջարկվող հայեցակարգը համոզիչ չէ: Հայեցակարգը գրեթե համապատասխանություն չունի հայտադիմումի ձևաթղթում պահանջվող կոնկրետ թեմաներին/ճյուղերին/ ոլորտներին և պահանջներին:

Գնահատման արդյունքների հիման վրա անկախ ժյուրիի անդամներն առաջարկվող նախագծերի համար պատրաստում են խորհուրդներ/առաջարկություններ հետևյալ չափորոշիչներով.

Առաջարկության կարգ	Նկարագրություն
A	**Առաջարկվում է հաստատել նախագիծը** - Որակյալ հայտադիմումներ, որոնք ամենաբարձր մակարդակով համապատասխանում են հայտարարված մրցույթի չափորոշիչներին
B	**Առաջարկվում է հաստատել նախագիծը որոշակի պայմաններով** - Հայտադիմումներ, որոնք համապատասխանում են չափորոշիչներին, բայց ունեն որոշ թերություններ, որոնք պարզաբանումից հետո կարող են շտկվել
C	**Առաջարկվում է չհաստատել նախագիծը** - Նախագծեր, որոնք չեն համապատասխանում Ծրագրով սահմանված հատուկ ռազմավարական և գործառնական պահանջներին

Հայեցակարգի առաջարկի հետ կապված ցանկացած սխալ կամ մեծ անհամապատասխանություն կարող է հանգեցնել դրա մերժմանը:

Պարզաբանումներ կպահանջվեն միայն այն դեպքում, երբ տրամադրված տեղեկատվությունը բավարար չէ գնահատում իրականացնելու համար:

Մասնակցության համապատասխանության և որակական գնահատման արդյունքները կներկայացվեն Ղեկավար կոմիտեի խորհրդին՝ վերջնական որոշում կայացնելու համար:

4.1 Հայտադիմումների հաստատում

Կոնսորցիումի կառավարող խորհուրդը կկատարի հայտադիմումների վերջնական ընտրությունը՝ հիմնված որակական գնահատականի վրա: Կոնսորցիումի կառավարող խորհուրդը կարող է սահմանել որոշակի պահանջներ, որոնք հայտատուն պետք է կատարի պայմանագիրը կնքելու գործընթացում կամ ամփոփիչ հաշվետվության հետ, եթե այլ բան նշված չէ:

Կոնսորցիումի կառավարող խորհուրդը ուղարկված հայտադիմումների հաստատման գործընթացում կունենա երեք հիմնական տարբերակ.

1. Հաստատել հայտադիմումը,
2. Հաստատել հայտադիմումը՝ որոշակի պահանջներով/պարզաբանումներով,
3. Մերժել հայտադիմումը:

Ղեկավար կոմիտեի խորհրդի հաստատումից և շահառուին ուղարկված պաշտոնական ծանուցումից հետո կսկսվի պայմանագրի (եթե անհրաժեշտություն կա՝ պարզաբանման գործընթացի) և դրամաշնորհի տրամադրման փուլը:

5 Ժամանակացույց

	ՕՐ	ԺԱՄԱՆԱԿ[3]
Հաեցակարգի առաջարկ ներկայացնելու Բաց կանչ (Փուլ 1)	Մայիսի 21, 2021	
Պայմանագիր կապող մարմնից պարզաբանումներ ստանալու վերջնաժամկետ	Հունիսի 4, 2021	
Առցանց հանդիպում -Պարզաբանումներ Բաց կանչի վերաբերյալ	Հունիսի 7, 2021	10:00
Առցանց հանդիպում -Պարզաբանումներ Բաց կանչի վերաբերյալ	Հունիսի 8, 2021	10:00
Պայմանագիր կապող մարմնից Հայեցակարգի առաջարկին վերաբերվող հստակեցումներ ստանալու վերջնաժամկետ	Հունիսի 11, 2021	
Հայեցակարգի առաջարկ ուղարկելու վերջնաժամկետ	Հունիսի 30, 2021	12:00
Հայտադիմորդների տեղեկացում՝ հայտերի ադմինիստրատիվ ստուգումների և դիմումների գնահատման մասին	Հուլիս 2021	
Ամբողջական հայտադիմում ներկայացնելու հրավեր (Փուլ 2): (ԱԼԳ յուր. Երկրից հինգ ընտրված քաղաքներ կարող են լրացնել Ամբողջական հայտադիմում)	Օգոստոսի 2, 2021	
Պայմանագիր կապող մարմնից Ամբողջական հայտադիմումի վերաբերյալ հստակեցումներ ստանալու վերջնաժամկետ	Օգոստոսի 13, 2021	
Առցանց հանդիպում – Պարզաբանումներ Ամբողջական հայտադիմումի վերաբերյալ	Օգոստոսի 16, 2021	10:00
Առցանց հանդիպում – Պարզաբանումներ Ամբողջական հայտադիմումի վերաբերյալ	Օգոստոսի 17, 2021	10:00
Պայմանագիր կապող մարմնից Ամբողջական հայտադիմումի վերաբերյալ հստակեցումներ ստանալու վերջնաժամկետ	Սեպտեմբերի 6, 2021	

Ամբողջական հայտադիմում ներկայացնելու վերջնաժամկետ	Սեպտեմբերի 30, 2021	12:00
Հայտադիմորդների տեղեկացում՝ հայտերի ադմինիստրատիվ ստուգումների և դիմումների գնահատման մասին	Նոյեմբեր 2021	
Մշակութային զարգացման ռազմավարության հրավեր (Փուլ 3): (ԱլԳ յուր. Երկրից երեք ընտրված քաղաքներ կարող են պատրաստվել և դիմել իրենց Մշակութային զարգացման ռազմավարության) առաջարկով	Նոյեմբեր 2021	
Մշակութային զարգացման ռազմավարության առաջարկի ուղարկման վերջնաժամկետ	Ապրիլ 2022	
Հայտադիմորդների տեղեկացում՝ հայտերի ադմինիստրատիվ ստուգումների և դիմումների գնահատման մասին	Հունիս 2022	
Ծանուցում մրցանակի մասին (Փուլ 4): (ԱլԳ յուր. Երկրից մեկ ընտրված քաղաք հրավիրվում է իրականացնել իր առաջարկած Մշակութային զարգացման ռազմավարությունը)	Հուլիս 2022	
Պայմանագրի ստորագրում	Հուլիս 2022	
Մշակութային զարգացման ռազմավարության իրականացման սկիզբ	Օգոստոս 2022	
Մշակութային զարգացման ռազմավարության վերջ	Սեպտեմբեր 2024	

---
[3] Կենտրոնական եվրոպական ժամանակ

6 Հորիզոնական սկզբունքներ

Հավասար հնարավորությունները և ոչ խտրական վերաբերմունքը այն երկու կարևորագույն հորիզոնական սկզբունքներն են, որոնք համահունչ են ԵՄ քաղաքականությանը և EU4Culture ծրագրին և նրանց անբաժան մասն են կազմում:

Աջակցություն ստացած հայտադիմումները/նախագծերը պետք է հնարավոր ամեն ձևով խթանեն այս սկզբունքները: Նախագծերը պետք է արտացոլեն հավասար հնարավորությունների և ոչ խտրական վերաբերմունքի հորիզոնական սկզբունքները, որոնք համահունչ են ԵՄ քաղաքականությանը: EU4Culture-ը խրախուսում է հավասար հնարավորությունները և ոչ խտրական վերաբերմունքը՝ անկախ սեռից, ռասսայական և ազգային ծագումից, կրոնից ու հավատքից, հաշմանդամությունից, տարիքից կամ սեռական կողմնորոշումից, ինչպես նաև իրենց գործողություններում, կարճաժամկետ ու երկարաժամկետ արդյունքներում կանանց ու տղամարդկանց միջև հավասարությունը: Նախագծերը պետք է նաև հաշվի առնեն, թե այս սկզբունքների հարցում ընդհանուր առմամբ որն է իրենց ազդեցությունը: Փուլ 3-ում հայտատուները պետք է ցույց տան, թե ինչպես են այս հորիզոնական սկզնունքները ներկայացված իրենց նախագծերի գործողություններում և արդյունքներում: Բացի այդ, հայտատուները պետք է ընդգծեն այդ սկզբունքները հարգելուն ուղղված հատուկ միջոցները, որոնք իրենք պատրաստվում են ձեռնարկել գործառնական մակարդակում: Հորիզոնական սկզբունքների խթանումը կդիտվի որպես դրական գործոն նախագծերի ընտրության ժամանակ:

7 Կոնտակտային տեղեկություն և տեղեկատվական հանդիպումներ

Ծրագրերն ուղարկելու գործընթացում տեխնիկական դժվարությունների դեպքում խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ eu4culture@goethe.de հասցեով:

Հայտադիմումի հետ կապված հարցերի դեպքում խնդրում ենք կապ հաստատել Ձեր ազգային համակարգողի հետ.

Երկիր	Կոնտակտային անձ	Էլ. հասցե
Հայաստան	Մարինե Կարոյան	Marine.Karoyan.extern@goethe.de
Ադրբեջան	Ֆիրուզա Բաղիր	Firuza.Baghir.extern@goethe.de
Վրաստան	Խատիա Ճոխոնելիձե	Khatia.Tchokhonelidze@goethe.de
Մոլդովայի Հանրապետություն	Էուգեն Հարաբարա	Eugeniu.harabara.extern@goethe.de
Ուկրաինա	Դարիա Մոսկալևիչ	Daria.Moskalevych@goethe.de

EU4Culture-ի թիմը կկազմակերպի առցանց տեղեկատվական հանդիպումներ/սեմինարներ հայտերի պատրաստման գործողությունների շրջանակներում հավանական հայտատուների մոտ առաջացած հարցերը պարզաբանելու համար: Հանդիպումները տեղի կունենան առաջին մրցույթի հայտարարումից երկու շաբաթ հետո (2021թ. հունիսի առաջին շաբաթ): Առցանց տեղեկատվական սեմինարները կանցկացվեն ազգային լեզվով: Սեմինարները կձայնագրվեն և կտեղադրվեն ծրագրի կայքում:

Սիրով սպասում ենք Ձեր հայտերին և մաղթում ենք հաջողություն:

(Հաջորդիվ ծանոթացեք հայտադիմումի կառուցվածքին: Հիշեցնում ենք, որ սա միայն ծանոթության համար է: Ուղարկելու համար հայտադիմումը պետք լրացնել GAP պորտալում):

Հավելված 1 – Դրամաշնորհի կառուցվածքը[4]

Հայտաձևը առկա է Գյոթե Ինստիտուտի հայտերի պորտալում (GAP)

Առաջարկների կանչ. Հայեցակարգ

Մշակութային զարգացման ռազմավարություն ԱլԳ երկրների ՄՉՔ-ների համար *(Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն, Ուկրաինա)*

Հայեցակարգ

Կոնտակտային տվյալներ. Գլխավոր հայտատու

Տեղեկություն գլխավոր հայտատուի մասին	
Երկիր	• Հայաստան / Ադրբեջան / Վրաստան / Մոլդովայի Հանրապետություն / Ուկրաինա
Քաղաքի անվանումը	
Քաղաքի բնակչությունը	
Հայտատու հաստատության անվանումը	
Հեռախոսահամար	
Էլ. հասցե	
Կայք	
Կոնտակտային տվյալներ	
Քաղաքի իրավական ներկայացուցիչ (օրինակ՝ քաղաքապետ)	
Դիմելաձև	• Տիկին/ Պարոն/ Այլ
Ազգանուն.	
Անուն.	
Հասցե.	

Հեռախոսահամար.	
Էլեկտրոնային հասցե.	
Հայտադիմումի կառավարման համար պատասխանատու անձ (Կոնտակտային անձ)	
Դիմելաձև	• Տիկին/ Պարոն/ Այլ
Ազգանուն.	
Անուն.	
Հաստատությունում զբաղեցրած պաշտոնը.	
Հասցե.	
Հեռախոսահամար.	
Էլեկտրոնային հասցե	
Այլ կարևոր տեղեկություն	

4.Դիմումի այս կառուցվածքն օգտագործվում է միայն ցուցադրական նպատակներով: Դիմումների ներկայացումը պետք է անել առցանց հարթակում (GAP):

ՔԱՂԱՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՔԱՂԱՔԻ ԿԱՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ– ԱՆԳԼԵՐԵՆՈՎ ԿԱՄ ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՎՈՎ
ՔԱՂԱՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Խնդրում ենք նկարագրել մեծ/փոքր քաղաքի հիմնական աշխարհագրական, ժողովրդագրական, մշակութային և տնտեսական առանձնահատկությունները, կառավարման կառուցվածքը, հիմնական մշակութային օբյեկտները և ենթակառուցվածքները, միջազգային/տարածաշրջանային գործակցությունը և այլն:

Նիշերի առավելագույն քանակը. **1000**

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՀԱՏՎԱԾԻ ԴԵՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
Խնդրում ենք նկարագրել Ձեր քաղաքի սոցիալ-տնտեսական միջավայրում մշակութային և ստեղծարար հատվածի ներդրումը: Խնդրում ենք օրինակներ տրամադրել վերջին 5 տարում Ձեր քաղաքի կողմից մշակութային և ստեղծարար հատվածում կազմակերպված հիմնական տոնավաճառների, փառատոնների, հավաքների և այլ մեծամասշտաբ միջոցառումների վերաբերյալ:

Խնդրում ենք նկարագրել հիմնական ենթակառուցվածքները, օբյեկտները և այլ հարթակներն ու տարածքները, որոնք ուղղված են մշակույթի և ստեղծարարության իրականացմանն ու խթանմանը:

Նիշերի առավելագույն քանակը **2000**

ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԸ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՀԱՏՎԱԾՈՒՄ
Խնդրում ենք նկարագրել մշակութային և ստեղծարար ճյուղերում ակտիվ ոչ կառավարական քաղհասարակության կազմակերպությունների դերակատրությունը: Խնդրում ենք բացատրել՝ ինչպես են Ձեր քաղաքի հանրային իշխանությունները աջակցում մշակութային և ստեղծարար ճյուղերի ներկայացուցիչներին: Խնդրում ենք նկարագրել կարողությունների զարգացման և այլ կրթական հարթակները, որոնք ուղղված են Ձեր քաղաքում մշակույթի և ստեղծարարության խթանմանը: Հնարավորության դեպքում խնդրում ենք նկարագրել, թե ինչպես են մշակութային և ստեղծարար ճյուղերի հանրային և մասնավոր ներկայացուցիչները ներգրավված Ձեր քաղաքում մշակույթի քաղաքականության ձևավորման գործընթացում:

Նիշերի առավելագույն քանակը. **2000**

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՀԱՏՎԱԾԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱՐԻՔՆԵՐՆ ՈՒ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ
Խնդրում ենք նկարագրել Ձեր քաղաքում մշակութային և ստեղծարար ճյուղերում առկա կարիքներն ու մարտահրավերները: Խնդրում ենք առաջարկել միջամտություններ կամ հնարավոր օպտիմալացման միջոցներ, որոնք կարող են նպաստել մշակութային և ստեղծարար էկոհամակարգի բարելավմանը և Ձեր քաղաքի կայուն սոցիալ-տնտեսական աճի համար առավելագույնի հասցնել մշակույթի և ստեղծարարության ներուժը:

Նիշերի առավելագույն քանակը. **500**

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Խնդրում ենք կարճ նկարագրել Ձեր քաղաքում մշակութային և ստեղծարար ճյուղերում գլոբալ զարգացման տեսլականը: Խնդրում ենք մատնանշել հիմնական քաղաքականության (քաղաքականությունների) ձեռնարկումները, հիմնական թիրախային խմբերը և ակնկալվող արդյունքները, որոնք կարող են համապատասխանել Ձեր քաղաքում Մշակութային զարգացման ռազմավարությանը:

Նիշերի առավելագույն քանակը. **500**

ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՁԵՐ ՔԱՂԱՔԻ ՄԱՍԻՆ
Արդյո՞ք վերջին հինգ տարում քաղաքը դիմել է որևէ այլ ֆինանսավորման (միջազգային, ԵՄ կամ ազգային ֆինանսավորման):
○ *ԱՅՈ* ○ *ՈՉ* *Եթե այո, խնդրում ենք տրամադրել կարճ տեղեկություն և իրականացված գործողությունների հղումը*

ՀԱՐԱԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Ինքնահայտարարագիր	***Ներբեռնել ինքնահայտարարագրի ձևաթուղթը***
Բյուջեի ձևաթուղթ	***Ներբեռնել բյուջեի ձևաթուղթը***